Հավելված N 21
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ, ՀԱՏՈՒԿ) ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _____ ____ _____ 20__ թ.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
ստուգող մարմնի գտնվելու վայրը հեռախոսը

Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ _____ 20___ թ., ավարտը՝ _____ _____ 20___ թ.

_____
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_____ ՀՎՀՀ
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի գտնվելու վայրը Հեռախոսը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ.հ.	Հարց	Պատասխան
1.	Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները	
2.	Իրականացվող կրթական ծրագրերը	
3.	Համապատասխան լիցենզիաների առկայությունը	
4.	Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	
5.	Սովորողների փաստացի թիվը ուսումնասիրության պահին	
6.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը	
7.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
8.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
9.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
10.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
11.	Տնօրենի տեղակալների թիվը (ըստ պաշտոնների նկարագրի)	
12.	Ուսուցիչների թիվը	
13.	Ատեստավորված ուսուցիչների թիվն ըստ տարիների	
14.	Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվն ըստ առարկաների	
15.	Հատուկ մանկավարժների (լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենամանկավարժ, ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնականներ) թիվը	
16.	Սոցիալական մանկավարժների թիվը	
17.	Հոգեբանների թիվը	
18.	Երկարօրյա խմբերի դաստիարակների թիվը	
19.	Լաբորանտների թիվը	
20.	Գրադարանավարների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագրեր իրականացնող կազմակերպության կառավարման խորհրդի լիազորությունների կատարմանն ուղղված ստուգումների

ՀՀ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին*	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1.	Պետական ուսումնական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) հաստատել է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ, սահմանված կարգով, ընտրել է խորհրդի նախագահ	ՀՄՕ, 11-րդ հոդված, հավելվածի 58-րդ կետ, խորհրդի ձևավորման կարգի 19-րդ կետ				0,4	փաստա-թղթային	
2.	Խորհրդի առաջին նիստը վարել է տարիքով ավագ Խորհրդի անդամը	խորհրդի ձևավորման կարգի 18-րդ կետ				0,3	փաստա-թղթային	
3.	Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվել են, և նրան առաջադրող մարմինը 20 օրյա ժամկետում առաջադրել է նոր թեկնածու՝ սահմանված կարգով	խորհրդի ձևավորման կարգի 15-րդ կետ				0,3	փաստա-թղթային	
4.	Խորհրդի նիստերը գումարվել են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ ըստ հաստատված ժամանակացույցի, խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի, կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ	հավելվածի 61-րդ կետ, խորհրդի ձևավորման կարգի 20-րդ կետ				0,3	փաստա-թղթային	
5.	Հաստատության տնօրենը Հաստատության խորհրդի անդամ չէ	խորհրդի ձևավորման կարգի 16-րդ կետ				0,3	փաստա-թղթային	
6.	Խորհուրդը՝ հիմնադրի սահմանած կարգով ընտրել է տնօրեն	հավելվածի 51-րդ կետի 1-ին ենթակետ				0,4	փաստա-թղթային	
7.	հաստատել է հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը	հավելվածի 51-րդ կետի 2-րդ ենթակետ				0,4	փաստա-թղթային	
8.	լսել և հավանության է արժանացրել գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները	հավելվածի 51-րդ կետի 4-րդ ենթակետ				0,3	փաստա-թղթային	
9.	սահմանել է հիմնադրի սահմանած կարգով հանրակրթական դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները	հավելվածի 51-րդ կետի 5-րդ ենթակետ				0,3	փաստա-թղթային	
10.	Խորհրդի առաջին նիստը գումարվել է խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո յոթնօրյա ժամկետում	հավելվածի 57-րդ կետ				0,4	փաստա-թղթային	

11.	Խորհրդի նախագահը կազմակերպել է խորհրդի աշխատանքները, նախագահել է խորհրդի նիստերը, կազմակերպել է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը և վավերացրել դրանք	հավելվածի 59-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
12.	Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում խորհուրդը եռօրյա ժամկետում ընդունել է որոշում՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին	տնօրենի ընտրության կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետ				**0,4**	փաստա-թղթային	
13.	Խորհուրդն առավելագույնը եռամսյա ժամկետում, հաշված տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից, կազմակերպել և անցկացրել է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ	տնօրենի ընտրության կարգի 3-րդ կետ				**0,4**	փաստա-թղթային	
14.	Խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել է զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ) հնգօրյա պարբերականությամբ՝ առնվազն երկու անգամ	տնօրենի ընտրության կարգի 6-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
15.	Մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստում պարտադիր նշվել են մրցույթի անցկացման վայրը, օրը, ժամը, տեղը, մրցույթի անցկացման կարգով սահմանված պայմանները, հայտերի ընդունման վերջնաժամկետը և տնօրենի ընտրության (նշանակման) կարգով սահմանված փաստաթղթերի ցանկը: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվել է նաև **azdarar.am** կայքում՝ սահմանված կարգով	տնօրենի ընտրության կարգի 6-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
16.	Խորհուրդը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը տրամադրել է կրթության կառավարման պետական լիազորված մարմնին	տնօրենի ընտրության կարգի 6.1. կետ				**0,3**	փաստա-թղթային	
17.	Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվել են հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից՝ 30 օրվա ընթացքում	տնօրենի ընտրության կարգի 7-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
18.	Մրցույթը նշանակվել է փաստաթղթերի ընդունման ավարտից հետո ոչ շուտ, քան երրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը	տնօրենի ընտրության կարգի 7-րդ կետ				**0,4**	փաստա-թղթային	
19.	Խորհուրդը տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի հայտն ընդունել է մրցույթ հայտարարած հաստատությունում	տնօրենի ընտրության կարգի 8-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
20.	Պահպանվել են հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմանները	տնօրենի ընտրության կարգի 9-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
21.	Հավակնորդը ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը	ՀՄՕ 12-րդ հոդվածի 1-ին մաս, տնօրենի ընտրության կարգի				**0,3**	փաստա-թղթային	

		10-րդ կետ						
22.	Մրցույթն անցկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ	տնօրենի ընտրության կարգի 13-րդ կետ				**0,4**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
23.	Մրցույթի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ խորհուրդը հրավիրել է (գրավոր) ներկայացուցչին՝ դրա մասին պատշաճ կարգով տեղեկացնելով լիազորված մարմնին	տնօրենի ընտրության կարգի 14-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
24.	ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը չի քվեարկել	տնօրենի ընտրության կարգի 16-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
25.	Խորհրդի նիստին մասնակցել է խորհրդի անդամներից առնվազն 6-ը	տնօրենի ընտրության կարգի 17-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
26.	Խորհրդի որոշմամբ մրցույթը հետաձգվել է մեկ անգամ՝ սահմանված կարգով	տնօրենի ընտրության կարգի 18-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
27.	Խորհրդի նախագահը կամ նախագահին փոխարինող խորհրդի անդամը մրցույթի հետաձգման որոշման և մրցույթի նոր օրվա մասին երկօրյա ժամկետում գրավոր տեղեկացրել է հավակնորդին (հավակնորդներին) և լիազորված պետական մարմնին	տնօրենի ընտրության կարգի 19-րդ կետ				**0,3**	փաստա-թղթային	
28.	ՀՀ մարզպետի (Երևանի քաղաքապետի)՝ խորհրդի անդամ չհանդիսացող ներկայացուցիչը մրցույթին մասնակցել է որպես դիտորդ	տնօրենի ընտրության կարգի 20-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
29.	Կրթության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ընտրությանը մասնակցել են դիտորդի կարգավիճակով	տնօրենի ընտրության կարգի 21-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
30.	Հավակնորդը բանավոր ներկայացրել է տվյալ հաստատության զարգացման իր ծրագիրը	տնօրենի ընտրության կարգի 22-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
31.	Հավակնորդի գործնական հմտությունները ստուգելու նպատակով խորհուրդն անցկացրել է հարցազրույց	տնօրենի ընտրության կարգի 23-24-րդ կետեր				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
32.	Հարցազրույցի ընթացքում հավակնորդի գործնական հմտությունները ստուգելու նպատակով տրվել է հինգ հարց՝ ՀՀ կրթության և	տնօրենի ընտրության կարգի				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ	

	գիտության նախարարության սահմանած և հրապարակած հարցաշարից: Հարցերն ընտրել է հավակնորդը՝ վիճակահանությամբ: Հարցերի պատասխանները նախապատրաստելու համար հավակնորդին տրվել է մինչև 15 րոպե ժամանակ	23-24-րդ կետեր					վերահսկողություն	
33.	Մրցույթի ընթացքն արձանագրվել է խորհրդի քարտուղարի կողմից և վավերացվել խորհրդի նախագահի ստորագրությամբ	տնօրենի ընտրության կարգի 25-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
34.	Տնօրենն ընտրվել է փակ քվեարկությամբ, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ	տնօրենի ընտրության կարգի 26-րդ կետ				**0,4**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
35.	Խորհրդի նախագահը քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո մինչև նիստի ավարտը հավակնորդների ներկայությամբ հրապարակել է քվեարկության արդյունքները	տնօրենի ընտրության կարգի 27-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
36.	Տնօրեն չի ընտրվել, նույն օրվա ընթացքում անցկացվել է կրկնակի քվեարկություն, որին մասնակցել են առնվազն երկու ձայն ստացած հավակնորդները	տնօրենի ընտրության կարգի 28-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
37.	Կրկնակի քվեարկությամբ ևս տնօրեն չընտրվելու դեպքում՝ սահմանված կարգով նոր մրցույթ է հայտարարվել	տնօրենի ընտրության կարգի 28-րդ կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
38.	Երկրորդ մրցույթի ժամանակ տնօրեն չի ընտրվել և նույն օրվա ընթացքում անցկացվել է կրկնակի քվեարկություն	տնօրենի ընտրության կարգի 28.1. կետ				**0,3**	փաստաթղթային և (կամ) գործընթացի նկատմամբ վերահսկողություն	
39.	Կրկնակի քվեարկությամբ ևս տնօրեն չի ընտրվել և հաստատության խորհուրդը եռօրյա ժամկետում նախարարություն է ներկայացրել խորհրդի նիստի արձանագրության և տնօրենի պաշտոնի հավակնորդների անձնական գործերի պատճենները	տնօրենի ընտրության կարգի 28.1. կետ				**0,3**	փաստաթղթային	
40.	Խորհրդի նախագահը տնօրենի ընտրության մասին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացրել է լիազորված մարմնին՝ ներկայացնելով նիստի արձանագրությունը, ընտրված տնօրենի անձնական գործը, փաստաթղթերը և ներկայացուցչի եզրակացությունը	տնօրենի ընտրության կարգի 31-րդ կետ				**0,3**	փաստաթղթային	
41.	Խորհրդի առաջին նիստը գումարվել է տարածքային կառավարման մարմնի պահանջով՝ խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո յոթնօրյա ժամկետում	հավելվածի 57-րդ կետ				**0,3**	փաստաթղթային	
42.	Խորհրդի նիստերը գումարվել են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ	հավելվածի 61-րդ կետ				**0,3**	փաստաթղթային	

43.	Խորհրդի գումարած նիստերն իրավազոր են, որոշումներն ընդունվել են սահմանված կարգով	հավելվածի 61-63-րդ կետեր				**0,3**	փաստաթղթային	
44.	Տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելիս խորհրդի անդամի լիազորությունները կասեցվել են	հավելվածի 65-րդ կետ				**0,4**	փաստաթղթային	
45.	Խորհուրդը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի փորձագիտական եզրակացության հիման վրա վաղաժամկետ դադարեցրել է տնօրենի լիազորությունները՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
46.	Խորհուրդը հաստատել է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
47.	Խորհուրդը հավանություն է տվել ուսումնական հաստատության զարգացման ծրագրին.	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
48.	Խորհուրդը քննարկել և հավանություն է տվել ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,3**	փաստաթղթային	
49.	Խորհուրդը սահմանել է պակաս խտությամբ դասարան՝ ուսումնական հաստատության լրացուցիչ միջոցների հաշվին	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,3**	փաստաթղթային	
50.	Խորհուրդը քննարկել է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը և ներկայացրել է պետական լիազորված մարմին	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,3**	փաստաթղթային	
51.	Խորհուրդը քննարկել է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,3**	փաստաթղթային	
52.	Խորհուրդը քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքները	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
53.	Խորհուրդը իրականացրել է վերահսկողություն ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման նկատմամբ	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
54.	Խորհուրդը առաջարկություններ է ներկայացրել պետական լիազորված մարմին՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
55.	Խորհրդի անդամը սահմանված կարգով իրականացրել է իր լիազորությունները	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	
56.	Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվել են սահմանված դեպքերում	ՀՄՕ, 11-րդ հոդված				**0,4**	փաստաթղթային	

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

1.	«Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է	V		
2.	«Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում			V

Ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք (**ՀՄՕ**)
2. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի **<<**Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**>>** N 1392-Ն որոշում **(Հավելված)**
3. ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-Ի N113-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 579-Ն հրաման (ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրաման «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ») (**խորհրդի ձևավորման կարգ**)
4. ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը» N319-Ն որոշում (**տնօրենի ընտրության կարգ**)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ